

և ամենակարեւոր է նորա սէրը երեխայի սրտի մէջ զարթուցանելու և վառ պահպանելու համար: Ոչ մի այլ յուսով չեն աղօթում երեխայքը, եթէ ոչ իւրեանց միտքը Աստուծոյ հաղորդելու համար: Ասում են, «Աստուած գիտէ մեր խորհուրդները, մեր սրտի մէջ նրանց ծնունդ առնելուց շատ յառաջ», և Այդ պղպէս է, այո՛, բայց խօսքերով արտայայտուած միտքը աւելի ճիշտ և որոշ է: Խօսեցէք յաճախ Աստուծոյ մասին, և դուք կարող կ'լինիք խօսել նորա մասին աւելի ևս կանոնաւորութեամբ և մտածել սիրայօժար ցանկութեամբ: Կարողեալեալ աղօթքը կարող է լինիլ միանգամ յօրինուած և ամենայն ժամանակում անփոփոխ. բայց և այն բացատրուած պէտք է լինի աշակերտներին այնպէս, որ հեշտ սեպհական էի նրանց յատուկ խորհրդածութիւններին: Աւ որովհետեւ այն աղօթքը ասվում է ամենի անունով, չպէտք է ունենայ երեխայական թոյլ և միակողմանի մտքեր, որոնք ունին իրենց մէջ կարող են յարուցանել ծաղր և անբաւականութիւն: Աւագ դասատուներում կարելի է թոյլատրել աշակերտներին ընտրել աղօթքների որոշեալ թուերից իւրեանց հաճոյականը: Եթէ կամենայ ուսուցիչը ասել առանձին աղօթք, թէև պարտաւոր է զիջանիլ երեխաների հասկացողութեան աստիճանին, բայց ոչ և նմանացնել նոցա խօսքերի անկատարութեանը. որովհետեւ աղօթքի մէջ ամենից առաւել հարկաւորն է սրտեռանդութիւնը: Նոյնպէս և անձայն աղօթքը կարող է տեղի ունենալ ժամանակ առ ժամանակ. թէև դորանով արտայայտել մտքերը չեն այն-

պէս որոշ և պարզ, այնու ամենայն ջերմեռանդն լուծիւնը ամբողջ ժողովի՝ ինքն ըստ ինքեան հեռի է քարշում մտածութիւնները զգայական առարկաներից:

(Շարունակելի)

Սարգիս Բարսեղ
Մ. Բարսեղեանց:

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՏԵՂԵԳՐՈՒԹԻՒՆ ՀԻՐԱԿԵՑ.

(Շարունակելի)

ԲԱԺԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԱՒԱՌՈՒՆ ՀԻՐԱԿԵՑ.

Գետք և բնական զիրք գաւառիս ինքնին բաժանեն զսա ի չորս մասունս, ըստ նախ և մէք որիչ աւանդեմք թէ իրրե տեղագրութիւն, թէ իրրե գաւառագրութիւն, ընկալցին բանասէրք, որպէս և հաճեցեն:

Ա. ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇԻՐԱԿ.

Այսպէս անուանեցաք զայս մասն, որ բաժանի Ախուրեան գետով յերից անտի միւս մասանցն, և յարեւելս կայ նոցա, և երկայնաձգի ցորեքտասան ժամուց ճանապարհ հանդերձ ամայի տեղեօքն յանկեան անդր, ուր Արասիս և Ախուրեան աջակցեալ շրջին յԱրարատ:

Այս մասն համակ զողջեսս ամայի էր, յորժամ տիրապետէին Պարսիկք: Իսկ առ Ռուսս անց առ 1800 ամօք, յորժամ

մարտ եդ ընդ Լճիւսն քաղաքի. և յառնուլ անդ զնա և ի տիրել, դադարեցոյց զպատերազմն, և թող զնա. յայնժամ զայս մասն Շիրակայ սեպհականեաց, և տակաւին մնաց ամայի մինչև ցամ 1828. բայց բարերարեաց մեծապէս, զի զառաջս ընթացից Լեզկեաց հատ կտրեաց, որով խաղաղութիւն գտին յաւարառուաց և ի գերչաց անտի բնակիչքն Լոռոյ, Բամբաձորոյ, Վեղարքունւոյ, և Արարատայ:

Այս երկայնաձգեալ մասն յԱրեւելից ունի զԱպարան գաւառ և զլեւոռն Արագած, և զԱրարատ առ Խըրքիս և առ աւերակ տեղեան: Ի Հարաւոյ Լճասխաւ անջրպետի ի Աղբայ, և տարածանի ցԱրատարապատ, յԱրեւմտից զերիս մասունս Շիրակայ՝ բաժանեալ Ախուրեան գետով, և զԱխուր, որք են ի սահմանի Օսմանեան: Ի Հիւսսոյ լեռամբք բաժանի ի Լոռոյ և ի Բամբաձորէ*):

Աղէքսանդրա-Պօլիս քաղաք. որ յառաջն թէ առ Պարսկօք, և թէ յետ առ Ռուսս իսկ անցանկոյ՝ անուանեալ էր Աիւմըիւ իբրեւ զիւղ իմն թափուր ի զիւղօրայից. յորում կային իբրեւ եօթանասուն տունք, հասարակ իմն և անզօրբերդ, և մի եկեղեցի քայքայեալ, որում միոյ կողման որմն միայն դեռ երևի:

Վաղթեալք ի Արուց, և սակաւք ի Արին, և ի Պայազիտոյ քաղաքաց, ի զննին ելն վայրացն. զայս միայն ընտրեցին տեղի յարմար շինելոյ զքաղաք. կիսով

(*) Է սա գաւառ իմն, յորում են և բազումք ի գաղթականաց, զոր ոմանք Բամբաձոր անւանեն: Բայց և ոմանք Բամբաձոր ասեն, յանւանէ բլտակի միոյ, որում Բամբ անուն տան:

ժամաւ ի վերոյ քան զԱխուրեան ի զիւրավայրի, ուր և պեղեցես՝ իսկոյն ջուր ելանէ. և առատացեալ յիւրմէ հոսանք ոռոգանեն զպարտիզունս բանձարոյ և առաւուտից:

Վաղի յընդարձակութեանն որ առ հիւսիս և յարեւելս գաղթեալքն ի սահմանաց Արուց լցին բնակութեամբ, և ցերեկայնութիւն տարածեցան, իբրեւ ի կեդրոնի կացուցին զքաղաքն:

Հնար էր նոցա հիմնել առ գետեղերբն, որ բաւական էր քաղաքի. բայց յերկիւղէ ի հանդիպոյ, կամ փնասակար ցուրտն ընդ ջուրց գետոյն ի վերին պարանոցէ սեղմելոյ յառաւօտուն սաստկազին բերեալ՝ ցաւաբեր լինի, այնու դիտմամբ ի վերոյ կառուցին:

Ի ձեռն արկանել սոցա ի շինութիւնս, և Ասոավարութիւնն հոգ կալաւ տալ չափ և կանոն տանց բարեձև ուղղակարգ չափակցութեան, և փողոցաց հարթայարմար ընդարձակութեան:

Եւ զի քարինք տեղոյն առատ, և նըման Հոռոմոսի վանուցն քարանց զիւրատաշ, ածեն զփայտ ի Վօղանլու լեռանց յորժամ չկայր արգելք և մաքս. զիւրութեամբ իմն յաջողեաց նոցա զտուն, զխանութ, զիջեան կանգնել կազմել յարդարել, և ուրախութեամբ պայծառացուցին զքաղաքն:

Յամին 1834, սկսաւ և բերդին շինութիւն. յայնժամ արքունուստ զիւրաւ դանձ ի քաղաքն, ոմանք շինուածապետք կացին, ոմանք զբազիր, ոմանք զործաւարք, սոքա շահեցան, և առեւտրից յաջողակութեան պատճառ զտան, որով յաւետ ևս շինութիւն եզիտ քաղաքն:

Յայնժամ այս քաղաք զանուանակո-
ուծիւն առ զԱղէքսանրդուսօլիս, յան-
ուանէ Մեծի Աղէքսանդրի թագաժա-
ռանդ որդւոյ Նիկողայոսի Պօղոսեան բա-
րեփառ և յաղթական Նայսերն Ռուսիոյ:

Այս բերդ լայնանիստ, ամրակառոյց և
վայելչադիր հայի ի վերայ քաղաքին, և
բարձունք նորա ևեթ երեւի ի հանդիպոյ
յԱրաղգաւորաց, շուրջանակաւ ունի խը-
րամ խորայատակ լայնարձակ, մի ևեթ
դուռն: Ակեղեցին Ռուսաց ի միջի նորա
խաչաձև. դմբէթ նորա բոլորակաւոր որ-
պէս ի մզկիթսն է տեսանել, և ոչ ըստ
Հայաստանեայց սովորութեան, որք ամե-
նեքին սլաճայր աւարտին, երկաթի թի-
թեղամբ պատեալ, որ ի հեռուստ որպէս
կապար ձուլեալ ի տախտակ երեւի դիտելոց:

Անդ ի բերդին բաց յընդարձակ ասպա-
րիզաց և ի սրահից, են և զինարանքն հա-
մակ քարուկիր, և կամարակապ:

Արեւուն և վեց սենեակք, որ են սոսկ
պահարանք վառօդոյ առանձին առանձին
որոշեալք ի միմեանց, և դրունք մէն մի ա-
մենեցուն սոցա, ի տուէ և ի դիշերի յիւ-
րաբանչիւր դրունս պահապանք զգուշու-
թեան կարգ ըստ կարգի փոփոխեալք:

Վտանին երկերիւր թնդանօթք, որք ի
վերայ պարսպին, և որք ի վայր անդր կա-
ցեալք՝ զարմանալի և արհեստաւոր դա-
սակարգութեամբ, ըստ սոցա և զգնտակսն
է գիտել:

Վարձեալ զեանափոր և կամարակապ
պահարանն շեշտաւոր նետչաց: Աւ որ այլ
ևս են զինուորութեան գործիք, և պատե-
րազմական պիտոյք:

Օւրմանալի և ամբարանոցն լի լի ցո-
րենով և գարւով, երկայնաձիգ, կամարա-

կապովք բաժանեալ՝ եօթնադռնեան, յո-
րըս բաւէ պաշարն յամենայն վնասուէ
աղատ մնալ յաւէտ քան զքսան ամս:

Իբրեւ վեց հարիւր սենեակք ընդար-
ձակք են ի բնակութիւն տասն հազար
զօրաց, թէպէտ սովորաբար չորեք հազարք
գտանին:

Աստ նստի և Պօլկովնիկն զօրաց զօրա-
պետ, որ ևս է առանձին բնակարան մե-
ծաշէն և բարեվայելուչ:

Օրք տեղւոյս չունին պէտս յամարան
իմարդս ելանել յաղագս ապահովութեան,
որպէս որք յԱրեւան են հարկին ելանել,
և ֆնացորդ պահակք բերդի նորա տրտըն-
ջան առ վատթարութեան օգոյն:

Ունին և յատուկ հիւանդանոց յա-
ղագս զօրաց ամենայն կարգաւորութեամբ:

Բացատ ի խրամոյ բերդիս է և այլ բըր-
դաձև շինուած ամրակառոյց, երկաթի զը-
րամբ և պատուհանօք, յորս արկաննն
զյանցաւորս:

Իսկ ի քաղաքի են տունք Հայոց երկ-
հազար. ընդարձակ եկեղեցի նորա, զոր
կանգնեցին փայտակերտ ծածկութիւն՝ յա-
նուն սուրբ Աստուածածնի, յորմէ փողո-
ցաւ որոշի վայելուչ Առաջնորդարանն.
որում կից է և դպրոցն ուր մանկունք Հա-
յոց և Տաճկաց իսկ զՀայ, զՌուս, և
զՏաճիկ դպրութիւնս ուսանին:

Ի՞ և այլ միւս փոքր եկեղեցի՝ սուրբ
Վէորդ՝ ի թաղի հողադործ բնակչաց:

Բայց կայր ի քաղաքամիջին ընդարձակ
տեղի, իբրեւ օրական տօնաժամառի. յոր
զիւղականք սայլիւք եկեալ վաճառեն զբե-
րըս իւրեանց, զփայտ, զածուխ: Վասն
այսպիսեաց այժմ որոշեցաւ այլ տեղի. ի
մնալ պարապորդ այնր տեղւոյ՝ զմասն ինչ

Յոյնք զբաւեցին, և զմեծ մասն Հայք, ուր կամին կանգնել զայլ եկեղեցի մեծադիր և սինազարդ՝ Ամենափրկիչ, որպէս և Յոյնք զայլ եկեղեցի:

Այս սրահէ զառաջեալ տանն աղնուական և մեծի իշխանին Մահտեսի Յակովբայ Տիգրանեան՝ ի Կարուց քաղաքէ փոխադրելոյ, զորմէ Ռուսական օրագիրն հրատարակեաց՝ լինել տէր միոյ միլիօնի:

Ռուսաց զօրականաց տունք երկերիւր, որոց եկեղեցի է որ ի բերդին: Ի մերձակայս քաղաքին զայլ տեղի ևս նշանակեալ են, ուր փոխադրել ունին և ի Մալականաց:

Յոյնք եօթն հարիւր տուն, մի եկեղեցի է նոցա դեռ. յուսան ի նոր անդ տեղւոջ արքունուստ շինել եկեղեցւոյ իւրեանց:

Վրացիք վեց հարիւր տուն, որք և ունին որիշ եկեղեցի: Պարսիկք վաթսուն տուն առանց մզկիթի են:

Կառուցին և Վատին կրօնաւորք ի բարձրադիտակ տեղւոջ քաղաքին՝ փայլուչ եկեղեցի, իրբև ի կէսն հասեալ, հարկ եղև նոցա ելանել աստի, և կայ եկեղեցին այնպէս. առորով փոքր մատուռն կամ տաճար կացեալ իցէ, ուր պատարագն Հայազգի Կաթողիկէ՝ որ անդ կան:

Ի քաղաքիս գտանին երկերիւր տուն հողագործութեան պարապեալք. այլ և արհեստաւորք, և վաճառականք: Առևտուրն թէև նուազ է քան զԱրեւանու, այլ շնուածոյք սորա ղեղեցիկ և բարեդիր քան զնորայն:

Ռուսաբերութիւն տեղոյս է ցորեան, զարի, կտաւատ: Այլ Արեւան և Արարատ հնգապատիկ աւելի սերմանց լինին սերմանացան. պարտիզուտ, և այդեւտ: Այլ օդ սորա առողջ, ուր ծերք իսկ ժիր

են. որպէս և ընդհակառակն Արարատեան երիտասարդք և մանկունք մեռեալահանդոյն յերերի կան, և ծերունի որ զժուարուտեսանի, զի վատառողջ իմն են ընդհանրապէս օդ նորա:

ՅԱրեւան արմաւք, չամիչք, նուշք, կաղնիք բազում գան յԱտրպատականէ, և անտի սփռին աստ և ի Տփլիս:

Ի քաղաքէ աստի յամենայն շաբաթ աւուր ելանէ փոշան դէպ ի Տփլիս, և որք յԱրեւան զիր զրեն, նմին տան, որոյ հասեալ ի տեղին Տիլ՝ քան դալատեան փոշտին յԱրեւանայ: Արիողին զզրենիս և զաւանդն յանձնեն ի մի փոշտ, որ բարձեալ տանի ի Տփլիս. և ինքեանք ի դարձի իւրեանց՝ որ յԱղէքսանդրապոլիս եկաւորի, զզիրս Արեւանոյ առեալ՝ ածէ անդր, և որ յԱրեւան դառնայ, զզիրս Աղէքսանդրա - Պօլոյ տանի անդր:

Կամեցաւ Կառավարութիւնն ի բացատ տեղւոջ հիմնել ի սահմանեալ սահմանի տօնավաճառ: Բայց բնակիչք տեսին զըրթւարութիւնն. զի զապրանս վաճառուց անդր տանել ունին, զկրպակս իւրեանց փակել, պատճառեցին թէ յերկրի աստ մերում ոչ ելանէ այնպիսի ինչ, զի և տօնավաճառ կարգիցի. եթէ միայն վասն կովուց և արջառուց իցէ այդ, չեն իսկ պէտք ամենեցուն այդմ մեծի զժուարութեան տանել, և յերկիւղի կալ միշտ յաւազակաց. որով խաղանեցաւ գործադրութիւնն:

(Ծառանկէն)